ներից դէպի հիւսիս է իջնում Կոպիս առ–ը, որի ակունքը Քրքլար–Զիարէթի (Քառասուն դից ուխտատեղին) է, որը ոռոգում է Լիպանա, Խարսի, Կոպիս գեղերի հանդերը եւ Քրիստափորի վանքը ու խառնւում է ձախից Ճորոխին: Ճորոխը դէպի հիւսիս ուղղուած ընդունում է Կուրուջա եւ Առիւծկա առուները, իսկ աջից Գոմ առուն եւ ապա անցնելով Բայբուրդի դաշտը՝ ոռոգում է քաղաքն ու շրջակայքը:

Բայբուրդի դաշտը, քաղաքի շրջակայքը 4—5 վերստ երկարութեամբ հարաւից հիւսիս եւ քիչ նեղ արեւելքից արեւմուտք, այնպիսի գեղեցիկ տեսարաններ ունի, որ այցելուին դրաւում յափշտակում է: Շուրջն ամէն ինչ դալար է պարտէզներ, այգեստաններ եւ բանջարանոցներ. դալարի թանձրութիւնը այնքան խիտ է, որ Ճորոխն էլ կանանչ է երեւում: 2000 աւելի տուն բնակչութիւնը իր բոլոր ջանքը դրած՝ զարդարել, աճեցրել, դրախտի է վերածել քաղաքի շրջապատը: Տարուայ ո՛ր եղանակին էլ մտնէք Բայբուրդ, բնութիւնը այնքան առատաբար է օժտել նրան, որ միշտ զմայլելի տեսարաններ կ՝ունենաք: Բայբուրդը շինուած է լերան լանջին՝ որը շրջապատուած է երեք կողմից լեռներով, որոց մէկի վրայ շինուած է բերդը–միջնաբերդը, իր բարձր պարիսպներով, որոնք շինուած են կարծր եւ սրբատաշ քարերով ու կրաշաղախով: Այս բերդը՝ որ շատ հին ան–